ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 61

«18» 11 2019թ. գ. Երևան

2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի նոյեմբերի 22-ի N ՀՕ-421-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման 16-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատախազությանը գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1558-Ն որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N 79-Ն որոշումով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի՝ «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների» N 2 աղյուսակով 1013 ծրագրի դասիչով 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննության ծառայություններ» ծրագրով 2019 թվականի ընթացքում լրացուցիչ ձեռքբերվելիք փորձաքննությունների կատարման ծառայությունների դիմաց վճարելու նպատակով Հայաստանի Հանրապետության դատախազությանը հատկացված միջոցների հաշվին դատական փորձաքննությունների կատարման ծառայությունները ձեռք բերել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարաններից (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմիններից

ստացված համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշումների հիման վրա:

2. Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը 2019 թվականի համար սահմանված է 560 ՀՀ դրամ:

3. Հաստատել փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և 2019 թվականի ընթացքում լրացուցիչ ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի (կցվում է):

4. 2019 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տվյալ ծրագրին լրացուցիչ հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում, անհրաժեշտության դեպքում փոփոխել սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմինների կողմից ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանի հավելվածով նախատեսվածին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2019 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի 2019 թվականի
նոյեմբերի 18 N 61 հրամանի

2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակի անվանումը	Միավորի նախահաշվային արժեքը /դրամ/	Քանակը /հատ/	Ընդամենը նախահաշվային արժեքը /հազ.դրամ/
Ձեռագրաբանական	25200	178	4485.6
Փաստաթղթաբանական	33600	284	9542.4
Հեղինակային	25200	0	0.0
Ֆոտոտեխնիկական	50400	4	201.6
Դիմանկարային	50400	8	403.2
Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	67200	48	3225.6
Հետքաբանական	25200	92	2318.4
Ձգաբանական	33600	38	1276.8
Պայթյունատեխնիկական	50400	20	1008.0
Նյութագիտական	33600	385	12936.0
Սննդային	33600	12	403.2
Կենսաբանական/հողագիտական/	33600	239	8030.4
Հրդեհատեխնիկական	50400	61	3074.4
Շինարարատեխնիկական	33600	66	2217.6
Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների	16800	41	688.8
Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	50400	26	1310.4
Տրանսպորտային հետքաբանական	50400	32	1612.8
Տնտեսագիտական	100800	18	1814.4
Ապրանքագիտական	16800	284	4771.2
Համակարգչատեխնիկական	84000	64	5376.0
Մշակութային արժեքների	67200	32	2150.4
Հոգեբանական	85680	42	3598.5
Դատաբժշկական	69440	60	4166.4
Դատաքիմիական (թունաբանական)	11760	82	964.32
Դատագենետիկական (ԴՆԹ-նույնականացման)	145600	0	0.0
Օդորոլոգիական (այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի)	33600	0	0.0
Ճարտարագիտատեխնիկական	84000	26	2184.0
Լինգվիստիկական	85680	3	257.0
Դատաէկոլոգիական	33600	6	201.6
Ընդամենը		2151	78219.0